# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լիդեր Մոթորս ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Azmol | Azmol | Azmol Litol 24 | UG Lubricants | Քսուք Լիտոլ-24, հակաշփումային, ջրակայուն, բազմաֆունկցիոնալ լիթիումային քսուք՝ նախատեսված տրանսպորտային միջոցների, հանգույցների, առանցքակալների, հոդակապերի և շփման այլ հանգույցների քսման համար։ Քսուքը պետք է համապատասխանի ԳՕՍՏ 21150-87 կամ արտադրողի տեխնիկական փաստաթղթով Լիտոլ-24-ին ներկայացվող պահանջներին։ Արտաքին տեսքը՝ միատարր քսուք՝ բաց դեղինից մինչև շագանակագույն երանգով, առանց մեխանիկական |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | խառնուրդների և ջրի տեսանելի առկայության։ Թանձրացուցիչը՝ լիթիումային։ NLGI դասը՝ 3 կամ արտադրողի տեխնիկական փաստաթղթով Լիտոլ-24-ին համապատասխան։ Աշխատանքային ջերմաստիճանային միջակայքը՝ առնվազն -40°C-ից մինչև +120°C։ Կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 185°C։ Պենետրացիան 25°C-ի դեպքում՝ 220-250 × 0.1 մմ։ Կոլոիդային կայունությունը՝ առանձնացված յուղի քանակը ոչ ավելի, քան 12%։ Ջրի պարունակությունը՝ բացակա կամ ոչ ավելի, քան արտադրողի տեխնիկական փաստաթղթով սահմանված նորմը։ Մեխանիկական խառնուրդները՝ բացակա։ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փակ և չվնասված փաթեթավորմամբ։ Փաթեթավորումը՝ 0.8 կգ, 1 կգ, 4 կգ, 8 կգ, 9 կգ, 17 կգ կամ 18 կգ տարաներով՝ ըստ մատակարարման հնարավորության և Պատվիրատուի պահանջվող ընդհանուր քանակի։ Արտադրության ամսաթիվը՝ ոչ շուտ, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | քան 2026 թվականի հունվարի 1-ը։ Մասնակիցը հայտով պարտադիր ներկայացնում է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, արտադրության երկիրը, փաթեթավորման ծավալը/քաշը, ինչպես նաև արտադրողի տեխնիկական թերթիկը կամ որակի անձնագիրը, որտեղ պետք է արտացոլված լինեն սույն տեխնիկական բնութագրով պահանջվող հիմնական ցուցանիշները։ Մատակարարվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը և տեխնիկական ցուցանիշները պետք է ամբողջությամբ համապատասխանեն մասնակցի հայտով ներկայացված ամբողջական նկարագրին և սույն տեխնիկական բնութագրին։ Այլ ապրանքային նշանի, մակնիշի կամ արտադրողի ապրանքի մատակարարումը չի թույլատրվում։ Պատվիրատուի մոտ հիմնավոր կասկած առաջանալու դեպքում Մատակարարը իր միջոցների հաշվին ապահովում է ապրանքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լաբորատոր փորձաքննությունը Պատվիրատուի կողմից նշված կամ հավատարմագրված լաբորատորիայում: Փորձաքննությամբ անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում ապրանքը համարվում է չմատակարարված, իսկ փորձաքննության, փոխարինման, տեղափոխման և այլ հարակից ծախսերը կրում է Մատակարարը: Տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացվում է Մատակարարի միջոցներով և հաշվին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Лидер Моторс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |